# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 10.01.2024թ. կնքված N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-24/01-2 «Պետության կարիքների համար համակարգիչների նորոգման ծառայությունների մատուցման» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «22» « 02 » 2024 ք.

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի ժ/պ Ա. Հովսեփյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Այ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մանվելյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 10.01.2024թ. կնքված N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-24/01-2 «Պետության կարիքների համար համակարգիչների նորոգման ծառայությունների մատուցման» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում ավելացնել վճարման ժամանակացույց (Պայմանագրի հավելված՝ N 2) համաձայն սույն համաձայնագրի հավելվածի:

1.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայությունների դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով, սույն համաձայնագրի հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Համաձայնագրի պայմանները (պայմանագրի) կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ | «Այ Սերվիս» ՍՊԸ |
| ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24 | ք. Երևան, Հ. Հակոբյան 3/14 |
| Երևանի թիվ 1 ՏԳԲ | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900018005588 | Հ/Հ 2050022367711001 |
| ՀՎՀՀ 01836525 | ՀՎՀՀ 00124361 |
| ---------------- Ա. Հովսեփյան | ---------------- Հ. Մանվելյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված
<<22>> << 02 >> 2024 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
<< Հավելված 2
<<10>> 01. 2024 թ. կնքված
N ՓԱԲ-ԳՀԾՁԲ-24/01-2 ծածկագրով գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ծառայությունների | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Հոդված | Նախատեսվում է ֆինանսավորել 2024թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
| | | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 3 | 50321100/1 | Անձնական համակարգիչների վերանորոգում | 4252 | - | - | - | - | - | 600 000 | 600 000 | 600 000 | 1 000 000 | 1 000 000 | 1 000 000 | 1 000 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24
Երևանի թիվ 1 ՏԳԲ
Հ/Հ 900018005588
ՀՎՀՀ 01836525
Ա. Հովնեփյան
(ստորագրություն)
Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Այ Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Հ. Հակոբյան 3/14
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022367711001
ՀՎՀՀ 00124361
Հ. Մանվելյան
(ստորագրություն)
Կ.Տ